

**Թեհմինա Մարության**  
**Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ**

**ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ «ՇՈՒՇԻ» ՎԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Հոդվածը նվիրված է Սերո Խանզադյանի «Շուշի» վեպի պատմականության խնդիրներին: Վեպում մեծածավալ փաստական, պատմական նյութ է օգտագործված, և Խանզադյանը կարողացել է ապահովել փաստանյութի գեղարվեստական մշակման բարձր մակարդակ: Գրողն ի հայտ է բերում պատմափիլիսոփայական հստակ աշխարհայեցողություն, որի գաղափարական հիմնաքարը հայ ժողովրդի ազատասիրության, անկախ գոյության ձգտման, ապրելու, գոյատևելու համար կամքի, այլ խոսքով՝ կենսունակ գոյակերպի հաստատումն է:

**Բանալի բառեր**՝ Շուշի, Արցախ, պատմավեպ, պատմականություն, պատմական կերպար, պատմափիլիսոփայություն:

**Tehmina Maroutyan,**  
**Candidate of Philological Sciences, Associate Professor**

**SOME ISSUES OF THE HISTORICAL ESSENCE OF THE NOVEL 'SHUSHI' BY SERO KHANZADYAN**

The article refers to some issues of the historical essence of the novel 'Shushi' by Sero Khanzadyan. A huge amount of factual and historical material is available in the novel and Khanzadyan was able to ensure an appropriate level of the fictional interpretation of the factual material. The writer reveals a clear historical-philosophical world outlook, the ideological corner-stone of which is the statement of the love for freedom of the Armenians, their desire of an independent existence, their strong will of living and surviving, in other words, the confirmation of their lusty existence.

**Keywords:** Shushi, Artsakh, a historical novel, historical essence, a historical character, historical philosophy.

**Теймина Марутян,**  
**Кандидат филологических наук, доцент**

**К ВОПРОСУ ОБ ИСТОРИЧНОСТИ В РОМАНЕ СЕРО ХАНЗАДЯНА „ШУШИ,,**

Статья посвящается проблемам историчности романа Сера Ханзадяна „Шуши,,. В романе использован объемный фактический, исторический материал, и Ханзадян сумел обеспечить высокий уровень при художественной обработке документа. Писатель определил историко-философское мировоззрение, идеологической основой которого является свободолюбие армянского народа, стремление к независимому существованию, к жизни, другими словами говоря- является подтверждением яркого образа жизнеспособности.

**Ключевые слова:** Шуши, Арцах, исторический роман, историчность, исторический образ, историческая философия.

Արցախյան շարժման բռնկումի հետ ասպարեզ եկած հայ մտավորականների շարքում Սերո Խանզադյանը ջերմեռանդ ու գլխավոր դրոշակակիրներից էր: Պատահական չէ, որ շարժման առաջին իսկ օրերից Խանզադյանն իր գրական ու հրապարախոսական հարուստ պաշարն ի սպաս դրեց պատմական արդարությունը վերականգնելու երախտաշատ գործին: «Ղարաբաղը կրակների մեջ» փաստավավերագրական գրքում գրողը հանրագումարի է բերում Արցախյան ազատագրական պայքարին նվիրված իր հասարակական, հրապարակախոսական

գործունեությունը՝ ինքնավստահություն, խիզախություն ու քաջություն պատգամելով սերունդներին: Այդ օգտաշատ գործունեությունն ունեցավ նաև գրական թոփչք. Ս.Խանգաղյանը դեպի Արցախի արմատները գնաց նաև գեղարվեստական խոսքով՝ 1991-ին հրատարակելով «Շուշի» վեպը՝ 18-րդ դարի վերջին քառորդի արցախյան իրադարձությունների անդրադարձով:

Վեպը Շուշիի պատմության գեղարվեստական յուրացման առաջին փորձն է՝ գրված Արցախյան շարժման անմիջական ազդեցության տակ՝ Շուշիի ազատագրության նախաշեմին: Հեղինակի նպատակն էր պատմական ճշմարտությունների, անցյալի դասերի, Արցախի հերոսական ոգու բացահայտումով նոր շունչ հաղորդել նորօրյա ազատամարտին և կերտել հայոց պետականության գաղափարախոսությունը: Առհասարակ, հայ պատմավեպը մշտապես ծրագրային բնույթ է ունեցել: Բաֆֆին, Ծերենցը, Մուրացանը, Պռոշյանը, Դեմիրճյանը, Ջորյանը և հետագա շրջանի գրողները իրենց պատմաքննական սևեռումներով փորձում էին հասարակական-քաղաքական բարդ հարցերի լուծումները գտնել պատմական ժամանակներում: Պատահական չէ, որ մեր պատմավեպերից շատերը գրվել են ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջաններում: Հեղինակելով «Շուշի» վեպը՝ Խանգաղյանը հարցադրումներ ուներ ի՞նչ ժամանակի համար. «Մերօրյա արցախյան շարժման արմատները շոշափելի են պատմական անցյալի այդ շերտերում», - նշում է հեղինակը վեպի ծանուցման մեջ և հավելում՝ թե՛ ժամանակագրական, թե՛ ազգային-ազատագրական պայքարի առումով «Շուշին» «Մխիթար Սպարապետի» շարունակությունն է:

Խանգաղյանը առաջին վիպասանն է, որ գրող-հետազոտողի խորակրկիտ հայացքով անդրադարձավ 18-րդ դարի ամենաբարդ ու դժնդակ շրջաններից մեկին՝ գրեթե չլեզվելով պատմական փաստերից ու ժամանակագրությունից: Հերոսների խառնվածքների հատկանիշները նույնպես բխում են ժամանակի պատմական առանձնահատկություններից:

Վեպի բնաբանը Մովսես Կաղակտավեցու<sup>1</sup> պատմությունից է՝ «Ճշմարտությունը չի կարող ծածկված մնալ և լույսը փակի տակ լինել»: Բնաբանի ընտրությունը հուշում է, որ վեպը, Արցախի, Շուշիի մաքառումների պատմության գեղարվեստական հուշարձան լինելով, նաև վավերապատում-վկայախոսություն է պատմական ճշմարտագանցությունների դեմ, որոնք տարածում են ազդեիները՝ հայոց տոհմիկ երկրամասի լիակատար տեր հռչակելով իրենց:

«Շուշի» վեպն ընդգրկում է պատմական երկարատև ժամանակահատված՝ 1740-ական թվականներից մինչև 1790-ական թվականները՝ շուրջ 5 տասնամյակի պատմություն:

Վեպը գրելու համար Խանգաղյանն ուսումնասիրել է հարյուրավոր պատմական ուսումնասիրություններ, այդ թվում ականատես պատմիչներ Առաքել Դավրիժեցու, Աբրահամ Գ Կրետացու, Եսայի Հասան Ջալալյանի, Աբրահամ Երևանցու, Ջաքարիա Քանաքեռացու օրագրություններն ու պատմությունները, բազմաթիվ արձանագրություններ, հիշատակարաններ, կալվածագրեր, կոնդակներ, հավաքել է, ինչպես ինքն է վկայել, «ավագահատիկների նման ցրված» բազմաթիվ փաստեր ու ազգագրական նյութեր: Լինելով Արցախի պատմական գրեթե բոլոր վայրերում՝ գրի էր առել պատմություններ Արցախում մղված հերոսական մարտերի, հինավուրց Արցախ-Խաչենի իշխանական տան շառավիղների՝ հինգ մելիքությունների մասին, որոնք հատկապես հզոր էին XVII դարավերջին և XVIII դարասկզբին, և պատմական այդ շրջանում էլ գլխավորել են հայ ազգային ազատագրական շարժումը՝ ընդդեմ պարսկական և թուրքական բռնակալությունների:

Վեպում մեծածավալ փաստական, պատմական նյութ է օգտագործված, և Խանգաղյանը կարողացել է ապահովել փաստանյութի գեղարվեստական մշակման բարձր մակարդակ:

Պատմականության զգացողությունը վեպում բնորշվում է հեղինակի գեղագիտական կայուն սկզբունքներով: Նա չի վիճարկում պատմիչների ու պատմագետների կարծիքները, ավելին՝ պատմության փորձի քննությունից արված հիմնական եզրահանգումները դնում է նոր ընթացքի մեջ, բացում դրանց ենթիմաստները՝ ներհյուսելով մերօրյա խնդիրներին:

Խանգաղյանին խորապես մտահոգում էին լույս տեսնող այն բոլոր գրքերը, որոնցում խեղաթյուրվում էր հայոց պատմությունը: Հարցադրույցներից մեկում խոսելով Մովսեսական հանրագիտարանի Ա հատորի մասին՝ նշել է, որ հատորում պետք է տեղ գտնեին նաև այն

1 Մովսես Կաղակտավեցու «Աղուանից աշխարհի պատմութիւն» աշխատության մեջ հարուստ տեղեկություններ կան «Հայոց արևելից կողմանց» Արցախ և Ուտիք նահանգների վաղ միջնադարյան պատմության մասին:

գործիչները, որոնք մեծ դերակատարում են ունեցել պատմության տարբեր շրջաններում, օրինակ Աբգար թագավորը (ըստ Խորենացու «Հայոց պատմության»՝ Աբգար Ուքքաման, ընդունելով քրիստոնեությունը, դարձել է 1-ին դարի անդրանիկ քրիստոնյա թագավորը), Աբրահամ Երևանցի պատմիչը (18-րդ դար), Աբրահամ Գ Կրետացին<sup>1</sup>, եգիպտահայ գործիչ Աբուսահլը և ուրիշներ:

Նշվածներից Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսին և Աբրահամ Երևանցուն մենք հանդիպում ենք «Շուշի» վեպում՝ որպես պատմողի կերպար ու գործող հերոս: Ավելին՝ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն»<sup>2</sup> և Կրետացու «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից»<sup>3</sup> աշխատությունները պատմական հենք են ծառայել վեպի առաջին մասի համար: Աբրահամ Երևանցին երևանցի վաճառական է, որ շուրջ մեկ տասնամյակ շրջել էր Իրանում և Թուրքիայում և լավատեղյակ էր ժամանակի ռազմաքաղաքական անցուղարձին: Քաղաքական իրադարձություններին, գերազանցապես պատերազմներին նվիրված այդ երկը սկսվում է աֆղանների՝ դեպի Պարսկաստան կատարած արշավանքի պատմությամբ և ավարտվում է Մուղանի դաշտում Թահմազ կուլի խանի՝ Նադիրի թագադրության և Թուրքիայի հետ հաշտություն կնքելու դեպքերի նկարագրությամբ: Թեև Աբրահամ Երևանցու պատմությունն ավարտվում է 1836 թվականի դեպքերով, Խանզադյանը նրան, որպես պատմողի կերպար՝ անբաժան է իր «նշխարարան» մատյանից, «խոսեցնում» է մինչև վիպական գործողությունների ավարտը (1790-ական թվականներ):

Անդրկովկասում 1734-1736 թվականներին Նադիրի ծավալած գործունեությունը, Մուղանում նրա թագադրման և Բայրամ Սելամի տոնակատարության արարողությունները շատ ավելի հանգամանորեն է ներկայացրել Աբրահամ Կրետացին: Նա ընդհանուր կողմերով հաստատում է Երևանցու հաղորդած տեղեկությունները այդ ժամանակահատվածի իրադարձությունների վերաբերյալ: «Պատմության» մեջ Կրետացին ակնարկում է, որ երբ ինքն էլ է հրավեր ստացել ներկայանալու Մուղան, շատ է զարմացել և ցանկացել է իմանալ կանչի պատճառը. «Բայց կարծիք ունեց, թե՛ զՇահն նստուցանելոց է ի գահոյո իւր, և ունեք, թե՛ ինքն նստելոց է. Բայց հաւաստին և վասն էրն ոչ է յայտնի»<sup>4</sup>: Խանզադյանի վեպում պատմական տեղեկությունների համաձայն՝ Աբրահամ Կրետացին Նադիրի թագադրման արարողության կենտրոնական դեմքն է: Դիվանագիտորեն կատարելով նորընծա շահի կամքը՝ Կրետացին մասնակցում է թագադրմանը և ավելին՝ շահի պատվերով, «իբրև Մեծն Իրանի թագավորության տարեկից արքայական երկրի հոգևոր առաջնորդ», օրհնում է նրա սուրբ: «Աբրահամ կրետացին սուրբ Բարձրացրեց գլխից վերև, օրհնեց իր իմացածի պես, սակայն առանց համբուրելու և ոսկեշղթա օղերով կապեց Նադիր շահի մեջքին.

-Թող այս սուրբ հատու լինի քո և մեր թշնամիների գլխին:

Նադիր շահը ժպտաց երկար բեղերի տակ:

- Օ՛, բարալըղ (Աստված օրհնի – Թ.Մ.) հպարտ եմ, որ բարեկամ հայն օրհնեց իմ սուրբ»<sup>5</sup>:

Վեպում վերոնշյալ դրվագին հետևում է վեհափառի հաջորդ դիվանագիտական քայլը. Կրետացին, նվերներով բեռնավորված, գնում է Նադիրի ապարանք և «երկրի վրա մարգարեին փոխարինող Վալիաթնամեից» խնդրում վերադարձնել Էջմիածնի «արդար ունեցվածքը», և վերականգնել վանքի «վաղնջական իրավունքը»: Վեպում Աբրահամ Երևանցին այդ դրվագների ակնատեսն ու պատմողն է, արտահայտում է իր վերաբերմունքը կաթողիկոսի նկատմամբ, գովերգում նրա «բռնած դիրքը», «հոգու արիությունը», երկրորդում «մեծ ցավից ծնված» հորդորները. «Հաճախ էր կաթողիկոսն ինձ ասում՝ այն թաթը, որ չես կարող կտրել, համբուրիր ու դիր ճակատիդ»<sup>6</sup>:

<sup>1</sup> Հայոց կաթողիկոս(1734թ.-ից) և պատմագիր: Գրել է «Պատմագրութիւն անցիցն իւրոց և ՆատրՇահին պարսից» երկը (բաղկացած է 53 գլխից, առաջին անգամ հրատարակվել է 1796 թ. Կալկաթայում): Տեղեկություններ կան այն մասին, որ Սերո Խանզադյանն ունի անտիպ ստեղծագործություն՝ «Աբրահամ Կրետացի» խորագրով, որի մասին վկայել է. «Իմ դառը մայրամուտի ժամանակ եմ գրել»:

<sup>2</sup> Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, Ե., 1938թ.:

<sup>3</sup> Աբրահամ Կրետացի, «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից»<sup>3</sup>, Վաղարշապատ, 1870:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>5</sup> Ս.Խանզադյան, Շուշի, էջ 78:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 79:

Վեպի միջուկն ու կենտրոնական խնդիրը Շուշիի պատմական ճակատագիրն է, ազատագրության իդեալը, «Ղարաբաղից օտար ուտքը կտրելը»: 1752 թվականին Վարանդայի տիրապետչակ Մելիք-Շահնազարի ապագային ու աղետալի քաղաքակության արդյունքում Արցախի սրտում՝ Շուշիում հաստատվում է քոչվոր ջնանշիր ցեղի սարըջալու ճյուղի ցեղապետ Փանահ խանը: «Մելիք Շահնազարը Հայոց աշխարհի սրտում օտար խանական որջ շինեց,-գրում է Խանզադյանը,- դրանով նա Ղարաբաղի գերեզմանի առաջին քարը դրեց»<sup>1</sup>:

Վեպում պատմականությունն արտահայտվում է ժամանակային բազմաթիվ էքսկուրսներով, մեծաթիվ գլխավոր ու երկրորդական կերպարների փոխնիփոխ անցումներով, գործողությունների բազաճյուղ զարգացումով, բայց հեղինակը կարողանում է դրանք հասցնել տրամաբանական հանգրվանի և խտացնել ասելիքը:

Պատմականության արտահայտիչներից մեկը վեպում հեղինակի պատմահայեցողությունն է՝ պատմության փիլիսոփայական իմաստավորման ենթատեքստով: Հեղինակը լավածանոթ է Արցախի պատմությանը և պատմության իմացությամբ էլ փորձում է հասկանալ, գնահատել, վերլուծել պատմության փորձը, խորհուրդը, «հետադարձ մարզարեությունը»(Խուլիո Կորտասար): Գրականագետները հաճախ են նկատել, որ «գրականության պատմության միջոցով կարելի է վերականգնել ժողովրդի պատմությունը», և հաճախ գրողն իր ժամանակի մասին ասում է շատ ավելին, քան պատմիչն ու պատմաբանը»<sup>2</sup>:

Վեպը բաղկացած է ժամանակային կոնկրետ տարածք ու հանգույց ունեցող չորս մասերից, որոնց ենթազույգումների միասնությամբ էլ ամբողջանում է գրողի պատմահայեցողությունը: Վեպն ունի պատումի, շարադրանքի ինքնատիպ ձև: Դեպքերը ներկայացնում է ոչ թե հեղինակը, այլ վեպի տարածաժամանակային տարբեր հանգրվաններում այս կամ այն առաքելությամբ հանդես եկող կերպարները՝ Գոհար միանձնուհին, ով մեզ ծանոթ է «Մխիթար սպարապետ» պատմավեպից Գոհար իշխանուհու կերպարով, Աբրահամ Երևանցի պատմիչը, ով ականատեսի այքերով արձանագրում ու գնահատում է ժամանակի անցուդարձերը, Խնձորեստանի մելիք դավաճան Միրզեխանի կինը՝ Երնջիկը, Մելիք Շահնազարի հանցակից ու մեղսակից Տեր-Իսրայել կաթողիկոսը, պարսից շահի դեսպան, ազգությամբ հայ Ալի Աբդուլ Հասանը, ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արդությանը, Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսը և ուրիշներ: Փաստորեն վեպում տիրապետողը ոչ թե հեղինակի, այլ պատմողի խոսքն է, և դա խանզադյանական պատմահայեցակարգի հիմնական առանձնահատկություններից է:

Խանզադյանին ավելի շատ հետաքրքրում է պատմողի մտածելակերպը, գործողությունները դիտելու և նկարագրելու ձևը, պատմական եղելությունները գնահատելու չափանիշը: Դրա համար էլ վեպի տարբեր հատվածներում պատմողը մեծ մասամբ ականատես է կամ ինչ որ մեկից լսած պատմության վերարտադրող:

Երբեմն պատմողը, նկարագրելով այս կամ այն իրադարձությունն ու գնահատելով այս կամ այն իրավիճակը, տալիս է հենց իր կերպարային բնորոշ նկարագիրը: Այդպիսի ցայտուն կերպար է Տեր-Իսրայելը, որին Մելիք Շահնազարը հանձնել էր Ամարասի հոգևոր գահաթոռը՝ իրեն մատուցած բազում սրբապիղծ ծառայությունների դիմաց: Պատմելով, թե ինչպես է թաթախման սուրբ մեռնին թույն խառնելով՝ թունավորել Չագեձորի Մելիք-Օհանին, Իսրայելը այսպես է իր հոգեվիճակը նկարագրում. «Ես բնավ մեղքի խայթ չզգացի: Դե, աշխարհ է, ճակատագիր է, ուր կարող ես փախչել վերուստ սահմանածից: Այս անգամ էլ ինձ բնավ մեղագործ չզգացի: Այս սատկածը պարարտացել էր իր իշխանական փառքով, ինձ չէր ընդունում: Ես իմ գործն եմ անում, իսկ խիղճ, գութ-մութ ասվածները մաշված, ծակծկված գուլպաներ են, հանիր ոտքիդ, դեն գցիր»<sup>3</sup>: Մեկ այլ եղենագործության մասնակցելով՝ կաթողիկոսը հանդարտորեն պատմում է. «Գիշերվա կեսին Իբրահիմ խանը ինձ ու երկու դահիճի հետ անաղմուկ մտավ Մելիք Եսայու բանտախուցը: Թևքերը ետ քաշեց, մագիլները խրեց կապկապված Եսայու կոկորդն ու սկսեց խեղդել: Նրա մարդիկ ամուր բռնեցին մելիքի ոտքերն ու ձեռքերը: Իբրահիմ խանը ծունկի եկավ մեռած մելիքից մի քիչ հեռու, գորգի վրա ու սկսեց առավոտյան նամագր: Ես ոչ մի աղոթք չհիշեցի»<sup>4</sup>:

<sup>1</sup> Ս.Խանզադյան, Շուշի, էջ 273:

<sup>2</sup> Ժ.Քալանթարյան, Անդրադարձներ, էջ 92:

<sup>3</sup> Ս.Խանզադյան, Շուշի, էջ 279

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 392:

Գաղափարական մի առանցքի շուրջ ամբողջացնելով բոլորի պատմածները, խոհերն ու մտորումները՝ Խանգաղյանը վերստեղծում է դարաշրջանի՝ դրամատիզմով ու վայրիվերումներով լեցուն մթնոլորտը:

Վեպի սկզբնամասում Խանգաղյանը պատմական իրադարձությունների պատճառահետևանքային շղթայից փորձում է առանձնացնել առաջին օղակը, որից էլ բացվում-ձավալվում է բուն թեման՝ Շուշիի ճակատագիրը:

1733 թվականին Կողմանք Արևելից գերագահ իշխան Մելիք Եզանը՝ վեպի ամենաընդգծված կերպարներից մեկը, դաշինք կնքելով Նադիր Ղուլիի հետ, կազմակերպում է օսմանյան Սարը Մուստաֆա փաշայի գործերի կոտորածը Արցախում: 1736-ին Մուղանի դաշտում շահ հռչակվելուց հետո Նադիրը, որպես երախտագիտության նշան, Արցախի հինգ մելիքությունները միավորում է մի նահանգի մեջ և խանի տիտղոս շնորհում Մելիք Ավան Եզանին: Ստեղծվում է Ղարաբաղի նահանգը՝ Տոդ կենտրոնով՝ որպես ինքնավար մի երկիր, որի սահմանները ձգվում էին Գանձակի հարավային մասերից մինչև Արաքս գետը: Պատմական այս եղելությունների անդրադարձը, ինչպես նշեցինք, զբաղեցնում է վեպի առաջին մասը: Ի դեպ, Մելիք Եզանը, իբրև քաղաքական-ռազմական գործիչ, հայտնի է դարձել Նադիրի Հայաստան մուտք գործելուց հետո: Աբրահամ Երևանցին իր պատմության մեջ նրա անունը չի հիշատակում (թեև վեպում, որպես գործող կերպար, առնչվում է նրա հետ), Կրետացին նշում է միայն, որ Մելիք Եզանը (Էկէնն – Թ.Մ.) մասնակցել է Մուղանում Նադիրի թագադրման արարողություններին: Պատահական չէ, որ Նադիրին հպատակություն հայտնած հայ մեծամեծների շարքում աղբյուրները չեն հիշատակում Սյունիքի և սղնախների ազատագրական շարժման առաջնորդներից և ոչ մեկին: Մինչդեռ հայտնի է, որ 18-րդ դարի 20-ական թթ. հայ ամենանշանավոր ռազմական գործիչը Դավիթ-Բեկն էր: Աբրահամ Երևանցու մի վկայության համաձայն՝ Սյունիքի սղնախների ազատագրական շարժման առաջնորդները բարյացակամ չեն եղել պարսից գահի հավակնորդ Նադիրի նկատմամբ: Թերևս դրանով է բացատրվում այն, որ ժամանակի հայ և պարսկալեզու աղբյուրներն ակնարկ անգամ չեն արել հայ ժողովրդի մղած հերոսամարտերի և նրա առաջնորդների մասին: Նրանք գիտակցաբար լռության են մատնել Դավիթ-Բեկին ու նրա հետ կապված իրադարձությունները, որպեսզի չգրգռեն Նադիր շահին: Խորամիտ Դավիթ-Բեկը, հավանաբար, հասկացել էր Նադիրի՝ հեռուն գնացող նպատակները և պարզ է, որ չէր կարող բարյացակամ լինել նրա նկատմամբ: Նադիր շահի պալատական պատմագիր Մուհամմադ-Քյազիմը, բնականաբար, մեծարում է ոչ թե Դավիթ-Բեկին կամ Միսիթար Սպարապետին ու Ավան Յուզբաշուն, այլ Նադիրին հպատակություն հայտնած Դիզակի Ավան Եզանին: Նա հիշատակվում է որպես նուրբ քաղաքագետ, արտակարգ ընդունակություններով օժտված իմաստուն գործիչ, որը Նադիր կողմից մեծ սիրո ու վստահության էր արժանացել: Ավելին, այդ ժամանակաշրջանում հայ ռազմական առաջնորդների շարքում առաջին տեղը հատկացնում է Մելիք Եզանին<sup>1</sup>:

Այսպես, Նադիր շահի կողմից Սյունիքի ու Արցախի հայության իրավունքների ճանաչումը նոր շուշ է հաղորդում ազատագրական պայքարին, հավատ ներշնչում վերջնական հաղթանակի հանդեպ:

Հավաստիորեն արտահայտելով պատմական ժամանակը՝ Խանգաղյանը վեպի երկրորդ մասում արդեն ներկայացնում է 1747 թվականին Նադիր Շահի սպանությունից հետո Պարսկաստանում ծայր առած գահակալական կռիվները, որոնց գումարվում են նաև ծայրամասային խանությունների պառակտողական քայլերը: Գանձակի խանը փորձում է վերականգնել մինչնադիրյան իրավունքները, բայց հանդիպում է Վարանդայի և Դիզակի մելիքների դիմադրությանը: Իհարկե, կռիվների վրայով Խանգաղյանն անցնում է հպանցիկ, հաճախ փաստական-տեղեկատվական անցումներով, բայց և ընդհանուր առմամբ պահպանում է կենդանի իրականության բարախը:

Վեպի կենտրոնական դեմքը դավաճան ու արյունարբու բռնակալ Մելիք-Շահնագարն է, որ, օգտվելով Նադիրի սպանությունից հետո ստեղծված քառսից, սպանում է եղբորը՝ Մելիք-Հովսեփին, կոտորում նրա ընտանիքը և իրեն հռչակում Վարանդայի մելիք: Ինչպես հեղինակն է գրում՝ «Ցեց է ընկնում Հայոց տունը»<sup>2</sup>: Ընթացիկ «Խամսայի մելիքությունները» աշխատության մեջ, որ նույնպես

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ.4., Ե., 1972:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 201

Խանգադյանի վեպի աղբյուրներից է, Մելիք-Շահնագարին անվանել է «Ղարաբաղի կործանիչ» և նրա ծագման վերաբերյալ հետևյալ ուշագրավ բացահայտումն արել. «Մելիք-Հովսեփը և Մելիք Շահնագարը խորթ եղբայրներ էին, Հովսեփը ծնված էր Մելիք-Հուսեփին Աննախաթուն անունով կնոջից, որը Դիզակի իշխան Մելիք-Ավանի քույրն էր, իսկ Մելիք-Շահնագարը ծնված էր Ջոհրախանումից, որը Նախիջևանի խանի աղջիկն էր, ազգով թուրք: Մելիք-Հուսեփնը նրան իբրև գերի բերեց Նախիջևանից, հետո ամուսնացավ նրա հետ»<sup>1</sup>: Մելիք Հովսեփը Խաչենի տիրակալ Հասան Ջալալյանների տան փեսան էր, և մելիքի մանկահասակ որդին՝ Սայիբեկը իր քեռի Մելիք-Ալահվերդու միջոցով փրկվել էր արյունահեղությունից ու ապաստանել այնտեղ: Սակայն Մելիք-Շահնագարի արյունոտ ձեռքը հասնում է նաև 4-ամյա փոքրիկին:

Խանգադյանը ոչ մի շեղում թույլ չի տվել պատմականության առումով, հերոսներն իրենց դարի ու ժամանակի մեջ են: Այստեղ են Գյուլիստանի Մելիք-Հովսեփը, Ջրաբերդի տեր Աստվածապով սպարապետը, Մելիք-Ալահղուլի սուլթանը, Խաչենի Մելիք-Ալահվերդին, Դիզակի Մելիք-Եսային, բազմաթիվ մելիքագուններ, հոգևորականներ, զինականներ, աշխարհագորայիններ, մելիքների ու գորականների ազատատենչ կանայք, որոնք, միավորելով իրենց ուժերը, դուրս են գալիս «հայրենիքի դավաճան» Մելիք-Շահնագարի դեմ: «Ես պատրաստ եմ ինձ կնքահայր դարձնել այն շանը, որի թեկուզ հաչոցը ապահովում է իմ գահը, իմ իշխանությունը»<sup>2</sup> - այս համոզմունքով է առաջնորդվում «հայոց ուխտից հեռացած» Մելիք-Շահնագարը, և հասկանալով, որ իր ուժերը բավարար չեն՝ երկար դիմադրելու մյուս չորս մելիքների՝ իր դեմ ծրագրած պատժապարտիչ գործողություններին, դիմում է Արցախի մերձակայքում թափառող սարջուլլուների աննշան ցեղապետ Փանահ խանի օգնությանը, հպատակվում նրան, և նույնիսկ թույլ է տալիս ամենաանթույլատերի արարքը. Փանահին է ընծայաբերում իր մելիքության տարածքում գտնվող հզոր պաշտպանական ամրությունը՝ Շուշի բերդը: Փաստորեն, մելիքների երկպառակությունն ից օգուտ է քաղում երրորդ՝ օտար կողմը՝ Փանահը, որ Մելիք-Շահնագարի թողտվությամբ 1752-ին հաստատվում է Արցախի սրտում: Խամսայի մելիքները ստիպված են լինում դիմակայելու նոր մարտահրավերների և տնականորեն ենթարկվելու զրկանքների: Հենց Փանահի ժամանակներից Արցախ են ներթափանցում այլացեղ ու այլակրոն էթնիկ տարրեր: «Մեր հայոց արևելքում, ուր մի մուսուլմանական խորճիթ անգամ չկար, բնավորվեցին քոչվոր խմբեր,-պատմական դառը իրողության մասին պատմում է հեղինակը:- Դրանք Փյունյան, Կարաչարլի, Ջինլի, Դամրչի-Հասանլի, Ղըզլ-Հադիլի, Սաֆի-Քյուրդլի, Քյոյ-Ահմեդլի, Սահաթլի, Քենգերլի կոչվող վաչկատուն ցեղերն էին»<sup>3</sup>: Կարճ ժամանակում Շուշին դառնում է սարըջալու ավազակապետի ինքիշխանության և ուժի կենտրոնը, որտեղից նա այրում, մոխրացնում էր ամեն ինչ, թույլ տալիս անթվելի չարագործություններ ու բանսարկություններ, փորձում բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով իրեն ենթարկել երբեմնի հզոր մելիքներին, ողջ Ղարաբաղը:

Փանահին հաջորդում է ոչ պակաս բռնակալ որդին՝ Իբրահիմ խանը, որը շարունակում է ամենաստոր միջոցներով պայքարել հայոց մելիքությունների ու դրանց հոգևոր կենտրոն Գանձասարի կաթողիկոսության դեմ: Իբրահիմի կողմից դավադրաբար սպանվում են Դիզակի Մելիք Եսային, Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան Ջալալյանը: Իբրահիմ խանի լարած որոգայթների արդյունքում սպանվում են նաև Դիզակի Մելիք-Բախտամը, Մելիք-Աբաարը, Մելիք-Եսայու որդի Բադդատ-բեկը, ինչպես նաև բազմաթիվ մելիքագուններ: Խանգադյանը գեղարվեստական ցայտուն ու սահմոկեցուցիչ պատկերներով է ներկայացնում Իբրահիմ խանի, նրա կնոջ՝ Մելիք Շահնագարի դուստր Հուրիզադի հայահռչտիչ կենսավարությունը, անթվելի եղեռնագործությունները: Առհասարակ, վեպում հատուկ վերաբերմունքի է արժանի կանանց դերի խնդիրը: Խանգադյանի կերտած հերոսական խառնվածքով բազմաթիվ կանանց իր տեսակի ու նկարագրի ողջ զգրելիությամբ հակադրված է Հուրիզադ խանումը:

Յուցահանելով Շուշիի պատմության «արյունոտ» էջերը՝ Խանգադյանի նպատակն էր ցույց տալ պատմականորեն միակ ճիշտ ուղին հայ ժողովրդի համար. այն է՝ Արցախի ազատագրումը, իսկ ազատագրել Արցախը՝ նշանակում էր նախ և առաջ ազատագրել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Շուշին: Վ.Պոտոկոյի հայտնի ձևակերպմամբ՝ «Ով տիրում է Շուշիին, նա

<sup>1</sup> Ըաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր 10, Ե., 1964:

<sup>2</sup> Ս.Խանգադյան, Շուշի, էջ 211:

<sup>3</sup> Ս.Խանգադյան, էջ 273:

տիրում է Ղարաբաղին»: Այս միտքը տարրալուծված է վեպում և կազմում է վեպի հոգեշաղախը: Գրողի հոգին ծառս է լինում, նա չի կարողանում զսպել հուզումը: «Թեև մենք շրջապատված ենք թշնամիներով ու թեև մեր Շուշին գերված է, բայց երբեք ստրուկ չէ: Ազատության կռվի կրակը մեր մեջ հզոր է և ոչինչ չի մարի նրան ոչ այսօր, ոչ էլ եկող ժամանակներում»<sup>1</sup>:

Խանգաղյանը վեր է հանում պատմության խորհուրդը, դասը: «Իմացիր, տե՛ր իշխան, Ղարաբաղը երբեք քո մականի տակ չի ընկճվի ու չի դառնա օտարին կեր ու կուր: Ժամանակները մեկ կամ տաս տարով չեն չափվում, այլ հարյուրամյակներով: Մի կարծիր, թե դու և քո դրածոն Ղարաբաղը կմարսեք»<sup>2</sup> - Գոհար միանձնուհին է պատմության այս դասը նետում Մելիք-Շահնազարին:

Վեպի վերջին հատվածները հատկանշվում են հրապարակախոսական որոշակի լիցքով: Գրողի իդեալը կրվող ժողովուրդն է, արթուն ու զինված հայր՝ ականջալուր կռվակոչի ահագանգին՝ «Է՛յ, հայե՛ր, ելե՛ք, եկե՛ք: Փրկենք մեր Ղարաբաղը, մեր տունը, մեր պատիվը... Դեպի Շուշի.... Ելե՛ք... Մենք կփրկենք քեզ, Ղարաբա ղ... Կանչը դողդաց Ղարաբաղի հորիզոնում: Այսպես՝ մինչև օրս...»<sup>3</sup>:

Ամփոփելով նշենք, որ վեպը, իբրև հայրենասիրության ազնիվ թեման շոշափող գործ, կոչված է հաստատելու, որ ժողովրդի դեմ դավեր նյութողը, նրան դավաճանողը, ի վերջո պիտի մերկացվի, պարտվի ու պատժվի, որովհետև ժողովուրդն անպարտելի է: Արտակ Մաղայանի դիպուկ նկատումով՝ «Միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիվ հաջողվեց սրբագրել Մելիք-Շահնազարի թույլ տված 240-ամյա ճակատագրական սխալը»<sup>4</sup>:

Իր պատմագեղարվեստական արժեքայնությամբ, կառուցվածքային ինքնատիպությամբ, պատմաքննական ու հոգեբանական դիտարկումներով, արդիական ըմբռնումների խորությամբ ու ընդհանրացումներով, հյութեղ ոճով Մերո Խանգաղյանի «Շուշի» վեպը հայ դասական պատմավեպի եզակի նմուշ է:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 414:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 452:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 479:

<sup>4</sup> «Պատմաբանասիրական հանդես», 2014թ., թիվ 1, էջ 194: